ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՑԵՑ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ Տ. ՆԱՎԱՍԱՐԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԱՆԸ

Կիրակի, հունիսի 1-ին, Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, մատուցվեց հերթական Ուխտի Պատարագը: Մայր Տաճարի օծման 1700-ամյակի փոնակատարությունների ծիրից ներս այս անգամ եկեղեցականաց դասի առաջնորդությամբ Ս. Էջմիածին էր եկել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի ուխտապահ ժողովուրդը՝ ավելի քան 10 000 հայորդիներ: Օրվա պատարագիչն էր թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը:

Հանուն Նորին Սրբության ուխտավորներին ողջունեց Մայր Աթոռի դիվանապետ Հոգեշնորհ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը:

«Այսօր ևս այս սրբարանից պիտի սկիզբ առնի մեր հոգևոր, կրոնական կյանքի ուժգին հոսանքը, քանզի այստեղ է հաստատված Լուսավորչի՝ Հայաստանյայց վերածնության Հոր սուրբ գավազանը, որ նրա հոտին միշտ ի փրկություն է հովվել: Այս ուխտով մենք պիտի նոր շունչ ու ոգի հաղորդենք մեր հավատքի հոր աստվածաշնորհ զորությանը՝ քրիստոնեությանը: Այս պահին ևս մեր մեջ լսելի է մշտակենդան հրավերը. «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ»»: «Մեզ այստեղ բերել է մեր ուխտադիր նախնիներից ժառանգված հայրենասիրության ու եկեղեցասիրության ոգին: Այս պահին ամենքս նորացված հավատքով ավելացրինք սրբի արցունքներով լցված Լուսավորչի կանթեղի յուղը, նորեն մկրտվեցինք Լուսավորչյան լույսով, մեր հոգիներում վառեցինք փրկչական ջահը: Այս պահին ամեն մեկս ուխտի մեր սպասումն ունենք: Աստված ի կատար անի ուխտը ամենքիս, իրականացնի բոլորիս երազները, համակի բարի մղումներով: Ապրենք նոր ձգտումներով, որպեսզի Աստծո լուսեղ փաճարի մեջ յուղասպառ կանթեղ չդառնանք, ինչպես կասեր Մուշեղ Իշխանը, որպեսզի մեր հոգին չդառնա հին բույն, որտեղ ոչ մի թռչուն գարուն չի բերում: Ուրեմն այս ուխտով թող գարնանանա մեր կյանքը, թող բորբոքվի մեր հոգու կանթեղը աստվածային սիրով առլեցուն»,- ասաց Նավասարդ Սրբազանը՝ բազմահազար ուխտավորներին ուղղված իր քարոզում:

Սրբազան արարողությանը ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամներ, Արարատյան Հայրապետական թեմի թեմական խորհրդի անդամներ, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, ՀՀ կառավարության անդամներ և Ֆրանսիայի Բուշ-դյու-Ռոն նահանգի վարչական խորհրդի նախագահ Ժան-Նոել Գերինին:

Արարատյան Հայրապետական թեմի ուխտի օրվա առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին նաև ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը և կառավարության մի շարք անդամներ:

Հավարտ Ս. Պատարագի թեմի հոգևորականաց դասին, թեմական և ծխական խորհրդի անդամներին, առաջնորդ Սրբազան Հոր գլխավորությամբ, Վեհարանում ընդունեց Վեհափառ Հայրապետը: